

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՐԿՈՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ ԱՐԹՈՒՐԻ

**ՆՈՐ ԵՐԵՎԱՆ ԵԿԱԾ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐՈՎ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ
ՎԱՐՈՒՅԹԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

ԺԲ.00.04. - «Դատական իրավունք – դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ԱՆԴՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2013

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

МАРКОСЯН ТИГРАН АРТУРОВИЧ

**ПРОИЗВОДСТВО ПО ПЕРЕСМОТРУ СУДЕБНЫХ АКТОВ ПО
ВНОВЬ ОТКРЫВШИМСЯ ОБСТОЯТЕЛЬСТВАМ
В ГРАЖДАНСКОМ ПРОЦЕССЕ**

АВТОРЕФЕРАТ

**Диссертации на соискание ученой степени кандидата
юридических наук по специальности**

12.00.04. – “Судебное право – судоустройство, гражданский процесс, уголовный процесс, криминалистика, судебная экспертиза, адвокатура, теория оперативно-розыскной деятельности”

ЕРЕВАН 2013

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում
Գիտական ղեկավար՝

իրավ. գիտ. թեկնածու,
դոցենտ Վ.Վ. Հովհաննիսյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

իրավ. գիտ. դոկտոր,
պրոֆեսոր Մ.Կ. Յուկով

իրավ. գիտ. թեկնածու
Վ.Ս. Բեժանյան

Առաջատար կազմակերպություն՝ Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը տեղի է ունենալու 2013թ.-ի հունիսի 14-ին, ժամը 14⁰⁰-ին Երևանի պետական համալսարանում գործող ԲՈՀ-ի իրավաբանության 001 մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքվել է 2013թ.-ի մայիսի 14-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,

իրավ. գիտությունների թեկնածու, դոցենտ

Ա.Գ. Վաղարշյան

Тема диссертации утверждена в Ереванском государственном университете

Научный руководитель:

кандидат юридических наук,
доцент В.В. Оганесян

Официальные оппоненты:

доктор юридических наук,
профессор М.К. Юков

кандидат юридических наук,
В.С. Бежанян

Ведущая организация: Российско-Армянский (Славянский) университет

Защита состоится 14 июня 2013г., в 14⁰⁰ часов на заседании специализированного совета 001 по юриспруденции ВАК при Ереванском государственном университете (0025, г. Ереван, ул. Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки ЕГУ.

Автореферат разослан 14 мая 2013 г.

Ученый секретарь специализированного совета,

кандидат юридических наук, доцент

А.Г. Вагаршян

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Դատական իշխանության մարմինների գործունեության արդյունավետությունը սերտորեն կապված է նրանց կողմից կայացվող դատական ակտերի որակով, որոնց երաշխավորման տեսանկյունից հատկապես կարևորվում է դատական ակտերի վերանայման գործուն դատավարական կառուցակարգերի առկայությունը: Այս առումով իր ուրույն տեղն է գրավում նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման ինստիտուտը, որը թույլ է տալիս գործի քննության ավարտից հետո բացահայտված որոշակի հանգամանքների առկայության դեպքում վերանայել ու բեկանել օրինականության և հիմնավորվածության տեսանկյունից կասկած հարուցող օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը: Որպես օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայման հնարավորություն ընձեռող վարույթ՝ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման ինստիտուտը դատավարագիտության մեջ արդարացիորեն դիտարկվում է որպես քաղաքացիական գործերով պատշաճ արդարադատության իրականացման և օրինականության ապահովման լրացուցիչ և կարևորագույն միջոցներից մեկը:

Նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման ինստիտուտը ՀՀ գործող քաղաքացիական դատավարության օրենսդրության կարճատև գոյության ընթացքում բազմիցս ենթարկվել է էական փոփոխությունների: Այդուհանդերձ, նույնիսկ վերջին փոփոխություններով ձևավորված իրավակիրառ պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ քննարկվող վարույթի առկա իրավակարգավորումը չի կարող կատարյալ համարվել, քանի որ, մի կողմից, որոշ դրույթների ձևակերպումները տարըմբռնումների տեղիք են տալիս, իսկ, մյուս կողմից, մի շարք սկզբունքային հարցերի լուծումները դուրս են մնացել օրենսդրի ուշադրությունից:

Միևնույն ժամանակ, պետք է նշել, որ Հայաստանի Հանրապետությունը 2002 թվականի մարտի 20-ին վավերացրել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» 1950 թվականի նոյեմբերի 4-ին ստորագրված եվրոպական կոնվենցիան, որի արդյունքում ստանձնել է դրանում ամրագրված պարտավորությունների պատշաճ կատարումն ապահովելու պարտականություն: Իսկ այդ հանգամանքը պարտավորեցնում է հետագոտվող ինստիտուտը վերլուծել այն չափորոշիչների լույսի ներքո, որոնք առաջադրված են եվրոպական կոնվենցիայով և դրա կիրառման արդյունքում ձևավորված Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայով:

Դրա հետ մեկտեղ, ՀՀ սահմանադրական դատարանը մի շարք որոշումներով սկզբունքային իրավական դիրքորոշումներ է արտահայտել նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթի առանձին հարցերի էության և կիրառման վերաբերյալ, որոնք, սակայն, դեռևս լիարժեք կերպով արտացոլված չեն դատավարական օրենսդրության մեջ:

Այսպիսով, նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթի էությունը և նշանակությունը ժամանակակից դատավարագիտական ըմբռումներին համապատասխանեցնելու, իրավակիրառ պրակտիկայում դրա բովանդակությունը ճիշտ բացահայտելու, գործող դատավարական օրենսդրության մեջ առկա բացթողումներն ու թերությունները վերացնելու և առկա իրավակարգավորումը ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններին, ՀՀ սահմանադրական դատարանի դիրքորոշումներին համապատասխան գնահատելու անհրաժեշտությունը օբյեկտիվորեն արդիականություն են հաղորդում սույն հետազոտությանը:

Հետազոտության թեմայի մշակվածության աստիճանը: Նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման ինստիտուտի հետ կապված որոշ հարցեր հետազոտության են ենթարկվել ինչպես Ցարական Ռուսաստանի, այնպես էլ խորհրդային և ժամանակակից դատավարագետների բազմաթիվ գիտական աշխատություններում: Հետազոտության թեմային առնչվող հիմնախնդիրները դարձել են նաև թեկնածուական և դոկտորական ատենախոսությունների առարկա, որոնց շարքում պետք է ընդգծել Ա.Ն. Ռեզունենկոյի, Ս.Ս. Ջավրիևի, Ս.Ս. Ահմեդովի, Ա.Պ. Տոմինայի, Ի.Ա. Պետրովայի, Լ.Ա. Տերեխովայի, Ե.Ա. Բորիսովայի և այլոց աշխատությունները:

Չնայած շարադրվածին՝ հարկ է նկատել, որ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթը դեռևս լիարժեք ուսումնասիրված չէ, և դրա վերաբերյալ համընդգրկուն գիտական աշխատությունները բացակայում են: Ասվածը պայմանավորված է նաև այն իրողությամբ, որ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման ներկայիս կառուցակարգը, որը ներդրվեց քաղաքացիական դատավարությունում 2010 թվականից, բավականին ինքնատիպ է և տարբերվում է ինչպես նախկինում գոյություն ունեցածներից, այնպես էլ ժամանակակից այլ պետությունների դատավարական օրենսդրությունների համանման ինստիտուտներից:

Հետազոտության օբյեկտը: Հետազոտության օբյեկտ են հանդիսանում նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման փուլում ծագող դատավարական հարաբերությունները:

Հետազոտության առարկան: Որպես հետազոտության առարկա հանդես է գալիս նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման ինստիտուտը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակը նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթի տեսական և գործնական հիմնախնդիրների համալիր ուսումնասիրությունն է և դրա հիման վրա օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի կատարելագործման առաջարկների մշակումը:

Նշված նպատակը ենթադրում է լուծել հետևյալ խնդիրները.

- վերլուծել նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթի էությունը և որոշել դրա տեղը դատական ակտերի վերանայման վարույթների շարքում,

- հետազոտել նոր երևան եկած հանգամանքների առանձին խմբերի առանձնահատկությունները և դրանց հիման վրա տարանջատել նոր երևան եկած հանգամանքները «նոր հանգամանք» և «նոր ապացույց» հասկացություններից,

- բացահայտել նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի բողոքարկման իրավունքի իրականացման նախադրյալները,

- ուսումնասիրել նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման դատավարական կարգը և գնահատել դրա արդյունավետությունը,

- գնահատել ձևավորված իրավակիրառ պրակտիկան և վեր հանել առկա հիմնախնդիրները,

- կատարված հետազոտությունների արդյունքների հիման վրա մշակել և ներկայացնել նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթը կարգավորող քաղաքացիական դատավարության օրենսդրության դրույթների կատարելագործման առաջարկներ՝ այդպիսով նպաստելով քննարկվող ինստիտուտի ամրապնդմանը և զարգացմանը:

Հետազոտության տեսական հիմքը: Հետազոտության տեսական հիմքը ձևավորվել է նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման ինստիտուտի կամ դրա առանձին հարցերի վերլուծությանը և գիտական իմաստավորմանը նվիրված հայրենական և արտասահմանյան աղբյուրներից: Դրանց շարքում հատկապես կարելի է առանձնացնել Ռ.Գ. Պետրոսյանի, Վ.Վ. Հովհաննիսյանի, Ս.Գ. Մեղրյանի, Ա.Յու. Մկրտումյանի,

Մ.Ս. Շաքարյանի, Ռ.Ե. Ղուկասյանի, Ե.Վ. Վասկովսկիի, Ի.Ե. Էնգելմանի, Լ.Ս. Մորոզովայի, Մ.Ս. Ստրոգովիչի, Մ.Գ. Ավդյուկովի, Մ.Ա. Վիկուտի, Օ.Վ. Իսայենկովայի, Լ.Ֆ. Լեսնիցկայայի, Ա.Ա. Մելնիկովի, Վ.Ս. Շերստյուկի, Ի.Մ. Ջայցևի, Կ.Ի. Կոմիսարովի, Ե.Ա. Բորիսովայի, Գ.Օ. Աբուլունինի, Ա.Տ. Բոնտերի, Վ.Ա. Դավիդովի, Մ.Կ. Տրեուշնիկովի, Ա.Ն. Ռեզունենկոյի, Լ.Ա. Տերեխովայի, Ս.Ս. Ջավրիևի, Ի.Գ. Ֆիլչենկոյի, Ի.Վ. Ռեշետնիկովայի, Ս.Ս. Ահմեդովի, Ա.Պ. Տոմինայի, Ի.Ա. Պետրովայի, Օ.Ն. Դիորդիևայի, Վ.Վ. Յարկովի, Դ.Մ. Չեչոտի և այլոց աշխատությունները:

Հետազոտության իրավական և փորձառական հիմքը: Հետազոտության իրավական և փորձառական հիմք են հանդիսացել նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման ինստիտուտին առնչվող Հայաստանի Հանրապետության և արտասահմանյան նորմատիվ իրավական ակտերը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, ՀՀ սահմանադրական դատարանի, ՀՀ վճռաբեկ և վերաքննիչ դատարանների դատական ակտերը:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը: Պայմանավորված հետազոտության նպատակով՝ այն իրականացվել է համընդհանուր՝ դիալեկտիկայի և պատմական, համատեսական՝ ինդուկցիայի, դեդուկցիայի, անալիզի, սինթեզի, ինչպես նաև մասնագիտական՝ համակարգակառուցվածքային, համեմատական-իրավական մեթոդների օգտագործմամբ:

Հետազոտության գիտական նորույթը: Հետազոտության գիտական նորույթը նրանում է, որ հայ իրավագիտության մեջ առաջին անգամ հնարավորինս համալիր և բազմակողմանի դիտարկվել է նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման ինստիտուտը՝ հաշվի առնելով ինչպես դատավարագիտության մեջ հանդիպող հայեցակետերը, այնպես էլ ձևավորված իրավակիրառ պրակտիկան: Դրանում բացահայտվել է նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման էությունը՝ որպես արդարադատության իրականացման արդյունքում տեղ գտած թերությունները վերացնելու դատավարական կառուցակարգ, և առանձնացվել են այս ինստիտուտի՝ վերաքննությունից և վճռաբեկությունից տարբերակող հատկանիշները:

«Դատական սխալ» հասկացության քաղաքացիադատավարական բովանդակության պարզաբանման համատեքստում աշխատանքում վերլուծության են ենթարկվել նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման հիմքերը, որի արդյունքում դրանք ձևակերպվել են որպես դատական ակտերի բողոքարկման ու դրանց օրինականության և հիմնավորվածության վրա ազդող իրավաբանական փաստեր:

Նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի բողոքարկման իրավունքի իրականացման նախադրյալների հետազոտության հիման վրա ատենախոսությունում հիմնավորվել է դրանց ինքնուրույնությունը, ինչպես նաև առանձնացվել են վերանայման վարույթի մասերը՝ հիմք ընդունելով կատարվող դատավարական գործողությունների համասեռ բնույթը, նպատակներն ու խնդիրները: Արդյունքում ոչ միայն կատարվել են տեսական եզրահանգումներ, այլև ներկայացվել են ՀՀ օրենսդրության և դատական պրակտիկայի կատարելագործման առաջարկություններ:

Ատենախոսության գիտական նորույթն ակնհայտորեն դրսևորվում է պաշտպանության ներկայացվող դրույթներում և օրենսդրության կատարելագործման առաջարկներում:

Պաշտպանության ներկայացվող դրույթները:

1. Նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթը քաղաքացիական դատավարության ոչ միայն ինքնուրույն, այլև բացառիկ փուլ է, որի ընթացքում ոչ թե դատական սխալի, այլ արդարադատության իրականացման արդյունքում տեղ գտած թերությունները շտկելու նպատակով են նոր երևան եկած հանգամանքների համատեքստում ստուգվում օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի օրինականությունը և հիմնավորվածությունը:

2. Դատական քննության առարկա հանդիսացած գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը հաստատող նոր ապացույցների բացահայտումը չի կարող դատական ակտը նոր երևան եկած հանգամանքներով վերանայելու հիմք հանդիսանալ, քանի որ «նոր երևան եկած հանգամանք» և «նոր ապացույց» հասկացություններն ունեն ակնհայտորեն տարբերվող բովանդակություններ: Մասնավորապես, եթե հանգամանքները կամ փաստերն օբյեկտիվ իրականության երևույթներ են, որոնք գոյություն ունեն անկախ մարդու գիտակցությունից, ապա ապացույցներն օրենքով սահմանված կարգով ձեռք բերված տեղեկությունները կամ փաստական տվյալներն են, որոնց միջոցով հնարավոր է դառնում այդ հանգամանքների առկայության կամ բացակայության պարզումը: Հետևաբար, գործի քննության ավարտից հետո հայտնի դարձած նոր ապացույցները առավելագույնը կարող են վկայել այն մասին, որ գործի քննության ժամանակ դրանց հետազոտման և գնահատման դեպքում դատական քննության առարկա հանդիսացած հանգամանքների առկայության կամ բացակայության մասին դատարանի հետևությունները այլ կլինեին: Ասվածից, իհարկե, բացառություն է այն դեպքը, երբ նոր ապացույցը փաստական տվյալներ է պարունակում ոչ թե կամ

ոչ միայն գործի քննության ժամանակ արդեն իսկ հետազոտված, այլև բողոք բերած գործին մասնակցող անձին և դատարանին գործի քննության ժամանակ անհայտ լինելու հետևանքով հաշվի չառնված, այսինքն՝ նոր երևան եկած հանգամանքների մասին:

3. Նոր երևան եկած հանգամանքներ չեն կարող դիտարկվել գործող քաղաքացիական դատավարության օրենսդրությամբ նախատեսված այն հանգամանքները, որոնք հայտնի են եղել գործի քննության ժամանակ, սակայն բողոք բերած անձի կամքից անկախ պատճառներով չեն ներկայացվել դատարանին: Դա բխում է այն իրողությունից, որ դրանք գործի քննության ժամանակ հայտնի լինելու ուժով ինքնին չեն կարող համարվել նոր երևան եկած: Ավելին, գործնականում հնարավոր չեն թվում այնպիսի իրավիճակները, երբ անձը, մասնակցելով գործի քննությանը, իրենից անկախ պատճառներով զրկված լինի հանգամանքը վկայակոչելու հնարավորությունից:

4. Նոր երևան եկած հանգամանք հանդիսացող հանցավոր արարքների առկայությունը հիմնավորող միակ թույլատրելի ապացույց կարող է դիտարկվել բացառապես օրինական ուժի մեջ մտած դատավճիռը: Ընդ որում, նման ապացույցի ձեռքբերումը հնարավոր դարձնելու տեսանկյունից քրեական դատավարության օրենսդրությունն այնքան էլ չի ներդաշնակվում քաղաքացիադատավարական օրենսդրության հետ, քանի որ չի նախատեսել քրեական գործի հարուցումը մերժելու կամ գործի վարույթը կարճելու արգելք այն իրավիճակներում, երբ համապատասխան հանցավոր արարքների հաստատումը դատավճռով կարող է անհրաժեշտ լինել դատական ակտը նոր երևան եկած հանգամանքներով վերանայելու համար: Իսկ նման պայմաններում ստացվում է, որ «ոչ արդարացնող» հիմքերով քրեական գործի հարուցումը մերժվելու կամ քրեական գործով վարույթը կարճվելու դեպքում շահագրգիռ անձինք զրկված են նոր երևան եկած հանգամանք հանդիսացող հանցավոր արարքների հիմքով դատական ակտի վերանայման իրավունքը իրացնելու հնարավորությունից և, փաստորեն, հայտնվելու են փակուղում, ինչը, բնականաբար, չի կարող համատեղելի լինել դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի հետ և ենթակա է շտկման:

5. Ոչ թե նոր երևան եկած, այլ նոր պետք է դիտարկվեն գործող դատավարական օրենսդրությամբ նոր երևան եկած հանգամանքների շարքում նախատեսված այնպիսի հանգամանքները, ինչպիսիք են դատական ակտի կայացման համար հիմք ծառայած դատական ակտի բեկանումը կամ վարչական ակտի վերացումը, քանի որ դրանց բնութագրական չէ գործի քննության ժամանակ գոյություն ունենալու հատկանիշը: Նույն պատճառա-

բանությամբ նոր պետք է համարվեն նաև գործի քննության ավարտից հետո դատական ակտի կայացման հիմքում դրված գործարքի անվավեր ճանաչման դեպքերը: Ընդ որում, և՛ դատական ակտի կայացման համար հիմք ծառայած վարչական ակտի վերացումը, և՛ դատական ակտի կայացման հիմքում դրված գործարքի անվավեր ճանաչումը դատական ակտի վերանայման հիմք կարող են հանդիսանալ բացառապես այն պարագայում, երբ վարչական ակտը վերացվում է ընդունման, իսկ գործարքը՝ կնքման պահից:

6. Քննարկվող վարույթում գործին մասնակից չդարձված անձինք չպետք է ունենան դատական ակտի վերանայում պահանջելու իրավունք, քանի որ նրանց գործի քննությանը չներգրավվելը և նրանց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ դատական ակտ կայացնելը առաջին հերթին վկայում է դատարանի կողմից թույլ տրված դատական սխալի մասին: Նման մոտեցման համար հիմք է ընդունվում նաև այն իրողությունը, որ գործի սկզբնական քննությանը այդ անձանց մասնակցության դեպքում հետագայում նրանց կողմից որպես նոր երևան եկած վկայակոչվող հանգամանքները կդառնային դատական քննության առարկա և հաշվի կառնվեին դատական ակտի կայացման ժամանակ: Հետևաբար, նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթը նախաձեռնելու իրավունքով օժտված են միայն գործին մասնակցող անձինք, նրանց իրավահաջորդները, եթե վիճելի կամ դատական ակտով հաստատված իրավահարաբերությունը թույլ է տալիս իրավահաջորդություն, ինչպես նաև գլխավոր դատախազը և նրա տեղակալները՝ օրենքով նախատեսված դեպքերում:

7. Նոր երևան եկած հանգամանքներով վերանայման օբյեկտները էականորեն տարբերվում են ինչպես վերաքննության, այնպես էլ վճռաբեկության կարգով բողոքարկման ենթակա դատական ակտերից: Մասնավորապես՝ դրանց թվին են դասվում ոչ միայն առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների՝ գործն ըստ էության լուծող և բողոքարկելի միջանկյալ դատական ակտերը, այլև օրինական ուժի մեջ մտած վճռի ուժ ստացած վճարման կարգադրությունները և վճռաբեկ դատարանի վճռաբեկ բողոքը վերադարձնելու և բողոքի քննության արդյունքում կայացված դատական ակտերը:

8. Նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթում դատարանը պետք է բոլոր դեպքերում անմիջականորեն հետազոտի և գնահատի գործում առկա ապացույցները, որպեսզի դատական ապացույցման տրամաբանության շրջանակներում կարողանա պարզել

բողոքի հիմնավորվածությունը, այսինքն՝ համապատասխան նոր երևան եկած հանգամանքի առկայությունը կամ բացակայությունը:

9. Նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթում օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի բեկանման համար անհրաժեշտ և բավարար պայման է հանդիսանում հանգամանքի առկայության հաստատումը՝ անկախ նրանից, թե ինչպիսի ազդեցություն է ունեցել այդ հանգամանքը գործի ելքի վրա: Ընդ որում, քննարկվող վարույթի արդյունավետությունը բարձրացնելու տեսանկյունից դատարանը, բեկանելով դատական ակտը, պետք է կարողանա կայացնել նոր դատական ակտ բոլոր այն դեպքերում, երբ տվյալ գործով, այդ թվում՝ վերանայման վարույթում, հաստատված հանգամանքներն առանց գործի նոր քննության հնարավորություն են տալիս կայացնել նման դատական ակտ:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը: Ատենախոսության մեջ կատարված հետազոտությունների տեսական նշանակությունն ամենից առաջ պայմանավորված է նրանով, որ այն հանդիսանում է նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման ինստիտուտի ուսումնասիրությանը նվիրված առաջին համալիր աշխատանքը հայ իրավագիտության մեջ: Ատենախոսության մեջ արված վերլուծությունների արդյունքները կարող են օգտագործվել հետագա գիտական հետազոտություններում և այն դասընթացներում, որոնց առարկան որևէ կերպ առնչվում է դատական ակտերի վերանայման վարույթների հետ կապված հիմնահարցերի ուսումնասիրությանը:

Հիմնախնդրի առնչությամբ կատարված ուսումնասիրությունները, ներկայացված առաջարկները և դրանց հիմնավորումները կարող են օգտագործվել նաև իրավաստեղծ գործունեության ժամանակ, ինչպես նաև նպաստել դատական պրակտիկայի կատարելագործմանը:

Հետազոտության արդյունքների փորձարկումը: Ատենախոսությունը պատրաստվել է ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնում: Հետազոտության արդյունքները արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված գիտական հոդվածներում, որոնք լույս են տեսել տարբեր ամսագրերում և գիտական ժողովածուներում: Ատենախոսության մի շարք դրույթներ ատենախոսի կողմից ներկայացվել են զեկույցների և առանձին դասընթացների շրջանակներում:

Ատենախոսության եզրակացությունների և առաջարկների որոշ մասն իրենց ամրագրումն են ստացել նաև ՀՀ արդարադատության նախարարության աշխատանքային խմբի (որի անդամներից է եղել հեղինակը) կողմից մշակված «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավա-

րության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծում¹:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 3 գլուխներից, դրանցում ընդգրկված 8 պարագրաֆներից, եզրակացությունից և օգտագործված նորմատիվ իրավական ակտերի, գրականության և պրակտիկայի նյութերի ցանկից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՑ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորված է ընտրված թեմայի արդիականությունը, ներկայացված են թեմայի մշակվածության աստիճանը, հետազոտության նպատակը և խնդիրները, օբյեկտը և առարկան, ատենախոսության աղբյուրագիտական և մեթոդաբանական հիմքերը, գիտական նորույթը, ցույց են տրված հետազոտության տեսական և գործնական նշանակությունը, ատենախոսության արդյունքների փորձարկումը և դրա կառուցվածքը, ինչպես նաև ձևակերպված են պաշտպանության ներկայացվող դրույթները:

Ատենախոսության առաջին գլուխը` «Նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթի ընդհանուր իրավական բնութագիրը» վերտառությամբ, կազմված է երկու պարագրաֆներից:

Առաջին գլխի առաջին պարագրաֆում` «Նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթի էությունը և նշանակությունը» վերտառությամբ, քննարկվում են հետազոտվող ինստիտուտի իրավաբանական բնույթի հետ կապված հիմնահարցերը: Մասնավորապես, հեղինակը նշում է, որ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթը հանդիսանում է քաղաքացիական դատավարության ոչ միայն ինքնուրույն, այլև բացառիկ փուլը: Ընդ որում, այս փուլի բացառիկությունը բացատրվում է այն հանգամանքով, որ այն թույլ է տալիս անտեսել իրավական որոշակիության սկզբունքի երաշխավորմանը միտված դատական ակտի օրինական ուժի այնպիսի հատկանիշը, ինչպիսին է անհերքելիությունը (անփոփոխելիությունը): Այլ կերպ ասած` հեղինակը դրանով իսկ իր անհամաձայնությունն է հայտնում դատավարագիտության մեջ հանդիպող այն տեսակետին, որ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթի բացառիկությունը պայմանավորված է դատական պրակտիկայում դատական ակտերի վերանայման հիմք հանդիսացող նոր երևան եկած հանգամանքների համեմատաբար հազվադեպ հանդիպելու հանգամանքով:

¹ Տե՛ս http://moj.am/storage/files/legal_acts/legal_acts_5394019566_Qax_dat_26.11.2012.pdf:

Այնուհետև անդրադարձ է կատարվում այն հարցի վերլուծությանը, թե արդյոք նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման ինստիտուտը հանդիսանում է դատական սխալի վերացման միջոցներից մեկը: Բացահայտելով «դատական սխալ» հասկացության քաղաքացիադատավարական բովանդակությունը՝ հեղինակը արձանագրում է, որ որպես այդպիսին կարող է դիտարկվել ոչ թե դատական գործունեության՝ քաղաքացիական դատավարության նպատակներին չհամապատասխանող ցանկացած արդյունքը, այլ միայն այն, որը հանդիսանում է նյութական կամ դատավարական իրավունքի՝ գործի սխալ լուծմանը հանգեցնող խախտման հետևանք: Այսինքն՝ ըստ ատենախոսի՝ դատական սխալը կրում է սուբյեկտիվ բնույթ և օբյեկտիվ պատճառներով արդարադատության նպատակների չիրագործումն ինքնին չի կարող վկայել դատական սխալի առկայության մասին:

Ամփոփելով շարադրվածը՝ հեղինակը եզրահանգում է, որ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթը քաղաքացիական դատավարության ինքնուրույն և բացառիկ փուլն է, որի ընթացքում ոչ թե դատական սխալի, այլ արդարադատության իրականացման արդյունքում տեղ գտած թերությունները շտկելու նպատակով են նոր երևան եկած հանգամանքների համատեքստում ստուգվում օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի օրինականությունը և հիմնավորվածությունը:

Առաջին գլխի երկրորդ պարագրաֆում՝ «Նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման հիմքերը» վերտառությամբ, հետազոտվում են դատական ակտերի վերանայման հիմք հանդիսացող նոր երևան եկած հանգամանքների առանձին խմբերը և բացահայտվում են դրանցից յուրաքանչյուրին բնորոշ հատկանիշները:

Վերլուծելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.32-րդ հոդվածի 1-ին կետը՝ հեղինակը գալիս է այն եզրակացության, որ դրանում օրենսդիրը, ըստ էության, միավորել է երկու տարաբնույթ հանգամանքները: Մասնավորապես, գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքներ, որոնք հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել գործին մասնակցող անձանց, և գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքներ, որոնք հայտնի են եղել գործին մասնակցող անձանց, բայց նրանցից անկախ պատճառներով չեն ներկայացվել դատարան:

Անդրադառնալով վերը նշված առաջին խումբ հանգամանքներին՝ ատենախոսը հիմնավորում է, որ դրանց հիմքով դատական ակտը ենթակա է վե-

րանայման միայն այն դեպքում, երբ այդ հանգամանքները ունեն գործի լուծման համար էական նշանակություն, օբյեկտիվ իրականությունում գոյություն են ունեցել գործի քննության ժամանակ, հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել ոչ միայն բողոք բերած գործին մասնակցող անձին, այլև դատարանին: Այսինքն՝ այս հիմքին բնութագրական հատկանիշները, ըստ ատենախոսի, ավելի են, քան օրենքով նախատեսվածները:

Հիշատակվածի լույսի ներքո քննարկելով իրավակիրառ պրակտիկայում հանդիպող այն դեպքերը, երբ դատական ակտի վերանայման հիմք է հանդիսանում դատական ակտի կայացման հիմքում դրված գործարքի անվավեր ճանաչումը՝ հեղինակը կարծիք է հայտնում, որ արդարացված չէ նման հանգամանքները դիտարկել նոր երևան եկած, քանի որ դրանք չեն բավարարում գործի քննության ժամանակ օբյեկտիվ իրականությունում գոյություն ունենալու և դրանով պայմանավորված գործին մասնակցող անձանց և դատարանին անհայտ լինելու պայմաններին: Հետևաբար, եզրակացվում է, որ գործի քննության ավարտից հետո դատական ակտի կայացման հիմքում դրված գործարքի անվավեր ճանաչումը՝ որպես դատական ակտի վերանայման հիմք, գործի քննությունից հետո ծագած լինելու պատճառաբանությամբ ՌԴ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 392-րդ հոդվածի օրինակով պետք է նախատեսվի նոր հանգամանքների շարքում: Ընդ որում, այստեղ հեղինակը վերապահում է անում այն մասին, որ գործարքի անվավեր ճանաչումը նույնիսկ որպես նոր հանգամանք կարող է հիմք հանդիսանալ դատական ակտի վերանայման համար, եթե գործարքը անվավեր է ճանաչվել կնքման պահից և ոչ թե դրա գործողությունը դադարեցվել է ապագայում:

Այնուհետև հեղինակը ուսումնասիրում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքների այն խումբը, որոնք հայտնի են եղել գործին մասնակցող անձանց, բայց նրանցից անկախ պատճառներով չեն ներկայացվել դատարան: Ուշադրության է հրավիրվում այն հանգամանքը, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի մի շարք (48-րդ, 87-րդ, 95-րդ և այլն) հոդվածներում ամրագրված պահանջների և առարկությունների հիմքում որոշակի հանգամանքներ դնելու պարտականության (հաստատման ծանրության) առկայության պայմաններում գործնականում հնարավոր չեն թվում այն իրավիճակները, երբ գործին մասնակցող անձն իրենից անկախ պատճառներով զրկված լինի դատարանին որոշակի հանգամանքներ վկայակոչելու հնարավորությունից:

Իրավակիրառ պրակտիկայի ուսումնասիրության արդյունքներով հիմնավորվում է նաև, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի

204.32-րդ հոդվածի 1-ին կետում «չեն վկայակոչվել» արտահայտության փոխարեն օգտագործված «չեն ներկայացվել» արտահայտությունը գործնականում հանգեցրել է նրան, որ տեղի է ունեցել «հանգամանք» և «ապացույց» տարբեր հասկացությունների միախառնում: Հետևաբար, հեղինակը տեսակետ է հայտնում այն մասին, որ նոր երևան եկած հանգամանքների շարքում երկրորդ խումբ հանգամանքների գոյության իրավունքը վիճելի է թվում՝ հաշվի առնելով նաև այն, որ դրանք գործի քննության ժամանակ հայտնի լինելու փաստի ուժով չեն կարող լինել նոր երևան եկած:

Այնուհետև հեղինակը մանրամասն վերլուծում է գործին մասնակցող անձանց, նրանց ներկայացուցիչների և դատարանի՝ գործի քննության հետ կապված հանցավոր արարքի հիմքով դատական ակտերի վերանայման հիմքերը: Կարծիք է արտահայտվում, որ, եթե դատարանի կողմից հանցավոր արարք կատարելու փաստի հաստատման դեպքում դատարանի կայացրած դատական ակտի բեկանումը այլընտրանք չի կարող ունենալ, ապա նույնը չի կարելի պնդել գործին մասնակցող անձանց և նրանց ներկայացուցիչների հանցավոր արարքների կապակցությամբ: Սույն համատեքստում առաջարկություն է արվում այն մասին, որ վերջիններիս կողմից հանցավոր արարքը հիմք լինի դատական ակտի վերանայման համար բացառապես այն դեպքում, երբ հանգեցրել է չհիմնավորված կամ ապօրինի դատական ակտ կայացնելուն:

Ատենախոսը սույն պարագրաֆում ուշադրության է հրավիրում նաև այն հարցը, թե արդյոք գործին մասնակցող անձը զրկված է դատական ակտի վերանայում պահանջելու իրավունքից այն դեպքում, երբ գործի քննության հետ կապված հանցավոր արարքը կատարվել է հենց իր կողմից: Հաշվի առնելով այդ մասին օրենսդրական արգելքը և իրավակիրառ պրակտիկայում արդեն իսկ առկա նախադեպը՝ հեղինակը հարցին տալիս է դրական պատասխան և, անընդունելի համարելով նման իրավիճակները, առաջարկում օրենսդրորեն կանխարգելել գործին մասնակցող անձի այդպիսի հնարավորությունը:

Հեղինակը, վերլուծելով նոր երևան եկած հանգամանք հանդիսացող հանցավոր արարքների ապացուցման առանձնահատկությունները, եզրակացնում է, որ նման արարքների առկայությունը հաստատող միակ թույլատրելի ապացույցը օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է: Այս տեսանկյունից անդրադարձնալով քաղաքացիական դատավարության և քրեադատավարական օրենսդրությունների համեմատական հետազոտությանը՝ արձանագրվում է, որ քրեական դատավարության օրենսդրությունը անհասկանալի պատճառներով չի նախատեսել քրեական գործի հարուցումը մեր-

Ժելու կամ քրեական գործով վարույթը կարճելու արգելք բոլոր այն դեպքերում, երբ համապատասխան հանցավոր արարքի հաստատումը դատավճռով կարող է անհրաժեշտ լինել մեկ այլ դատական գործի վարույթը նոր երևան եկած հանգամանքներով նորոգելու համար: Այդ իսկ պատճառով, ելնելով յուրաքանչյուրի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքը երաշխավորելու անհրաժեշտությունից, հեղինակը նշում է, որ քրեական դատավարության օրենսդրությունում պետք է կատարել համապատասխան լրացում:

Սույն պարագրաֆում քննարկվում են նաև դատական ակտի կայացման համար հիմք ծառայած դատական ակտի բեկանման կամ վարչական ակտի վերացման հիմնահարցերը:

Հեղինակը գտնում է, որ գործի քննության ավարտից հետո դատական ակտի բեկանումը դրա հիման վրա կայացված դատական ակտի վերանայման հիմք նախատեսելը պայմանավորված է օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի նախադատելիությամբ և դրանց պարտադիրությամբ:

Այնուհետև անդրադարձնալով դատական ակտի կայացման համար հիմք ծառայած վարչական ակտի վերացման հիմնահարցին՝ հեղինակը նշում է, որ այդ հիմքով դատական ակտի վերանայումը բխում է վարչական ակտի՝ որպես անհատական իրավական ակտի իրավաբանական ուժից: Ընդ որում, հաշվի առնելով վարչական ակտերի անվավեր ճանաչման տարբեր պահերի հնարավորությունը՝ եզրակացվում է, որ դատական ակտի վերանայման հիմք կարող է հանդիսանալ միայն ընդունման պահից վերացված վարչական ակտը, քանի որ անվավեր ճանաչելու մասին որոշում ընդունելու պահից անվավեր ճանաչման դեպքում նման վարչական ակտի գործողությունը դադարեցվում է գործի քննության ավարտից հետո և, հետևաբար, որևէ նշանակություն չի կարող ունենալ դրա հիման վրա կայացված դատական ակտի համար:

Միևնույն ժամանակ, վերլուծելով նոր երևան եկած հանգամանքների այս խմբի առանձնահատկությունները, ատենախոսը արձանագրում է, որ, ի տարբերություն նոր երևան եկած այլ հանգամանքների, դրանք օբյեկտիվ իրականությունում ծագում են գործի քննության ավարտից հետո և, ըստ էության, հանդիսանում են ոչ թե նոր երևան եկած, այլ նոր հանգամանքներ: Այլ կերպ ասած՝ հեղինակը միանում է դատավարագիտության մեջ արտահայտված այն տեսակետին, որ այս հանգամանքները օրենքով ընդամենը հավասարեցվել են նոր երևան եկած մյուս հանգամանքներին, և առաջարկում է դրանք ամրագրել նոր հանգամանքների շարքում:

Երկրորդ գլուխը` «Նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթի նախադրյալները» վերտառությամբ, բաղկացած է երեք պարագրաֆներից:

Երկրորդ գլխի առաջին պարագրաֆում` «Նոր երևան եկած հանգամանքներով բողոք ներկայացնելու իրավունք ունեցող սուբյեկտները» վերտառությամբ, ուսումնասիրվում են նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման բողոք ներկայացնելու իրավունք ունեցող սուբյեկտների հետ կապված հիմնահարցերը:

Անդրադառնալով նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման բողոք բերելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակի պարզաբանմանը` հեղինակը գտնում է, որ նման իրավունքով օժտված են ամենից առաջ գործին մասնակցող անձինք և նրանց իրավահաջորդները: Ընդ որում, նման եզրահանգման հիմքում դրվում է այն հիմնավորումը, որ այդ անձինք գործի ելքում ունեն իրավաբանական շահագրգռվածություն և դրա ուժով օժտված են վարույթի շարժման վրա ազդելու հնարավորությամբ:

Այնուհետև հեղինակը քննարկում է այն հարցը, թե արդյոք նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման բողոք ներկայացնելու իրավունքով օժտված են գործին մասնակից չդարձված անձինք, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է գործն ըստ էության լուծող դատական ակտ:

Ատենախոսը, կարևորելով նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման բողոք բերելու իրավունք ունեցող սուբյեկտների հնարավորինս լայն շրջանակ նախատեսելու հանգամանքը, այդուհանդերձ, գալիս է այն եզրահանգման, որ գործին մասնակից չդարձված անձանց բողոքարկման իրավունքի ընձեռումը կհակասի քննարկվող վարույթի էությանը: Մասնավորապես, հանգամանքները որպես նոր երևան եկած որակելու հնարավորությունը դիտարկվում է ուղղակի կախվածության մեջ անձի գործի քննության մասնակցությունից, քանի որ նրա մասնակցության դեպքում այդ հանգամանքները հայտնի կլինեին դատարանին և, հետևաբար, հաշվի կառնվեին դատական ակտի կայացման ժամանակ: Իսկ, մյուս կողմից, նման անձանց գործի քննությանը մասնակից չդարձնելը վկայում է դատարանի կողմից թույլ տրված դատական սխալի մասին, որի վերացման նպատակով հետազոտվող վարույթի ծառայեցումը արդարացված չի թվում:

Երկրորդ գլխի երկրորդ պարագրաֆում` «Նոր երևան եկած հանգամանքներով վերանայման օբյեկտները և բողոք ներկայացնելու ժամկետները» վերտառությամբ, բացահայտվում են նոր երևան եկած հանգամանքները:

րով վերանայման ենթակա դատական ակտերի շրջանակը, ինչպես նաև բողոքի ներկայացման համար սահմանված ժամկետները հաշվարկելու առանձնահատկությունները:

Հեղինակը, քննարկելով իրավաբանական գրականության մեջ այս հարցի առնչությամբ առկա տեսակետները, հանգում է այն հետևության, որ նոր երևան եկած հանգամանքներով վերանայման օբյեկտ կարող են հանդիսանալ առաջին ատյանի և վերաքննիչ դատարանի կողմից կայացվող գործն ըստ էության լուծող դատական ակտերը, ինչպես նաև այն միջանկյալ դատական կատերը, որոնց համար նախատեսված է անմիջական բողոքարկման հնարավորություն:

Մինևույն ժամանակ, ատենախոսը հիմնավորում է, որ առաջին ատյանի դատարանի կողմից արձակվող վճարման կարգադրությունները ևս կարող են հանդիսանալ նոր երևան եկած հանգամանքներով վերանայման օբյեկտ, քանի որ օրենքով նախատեսված որոշակի պայմանների առկայության դեպքում դրանք, ըստ էության, ստանում են օրինական ուժի մեջ մտած վճրի ուժ: Ըստ որում, հաշվի առնելով իրավական որոշակիության սկզբունքի պահպանման անհրաժեշտությունը՝ առաջարկվում է օրենքում այդ մասին կատարել համապատասխան լրացում, ինչպես, օրինակ, դա արված է Ուկրաինայի քաղաքացիական դատավարության օրենսգրքի 361-րդ հոդվածում:

Այնուհետև, հետազոտելով նոր երևան եկած հանգամանքներով վերանայման ենթակա վճռաբեկ դատարանի դատական ակտերի վերանայման հնարավորության հարցը, հեղինակը գտնում է, որ հարցը անհրաժեշտ է դիտարկել վճռաբեկ վարույթի իրավակարգավորման հիմքում ընկած տրամաբանության տեսանկյունից: Արդյունքում եզրակացվում է, որ վերանայվել կարող են վճռաբեկ դատարանի ոչ թե բոլոր, այլ միայն այն դատական ակտերը, որոնք բողոք բերած անձի համար կարող են ունենալ անբարենպաստ նշանակություն՝ որպես այդպիսին առանձնացնելով վճռաբեկ բողոքը վերադարձնելու և բողոքի քննության արդյունքներով կայացված դատական ակտերը:

Քննարկելով նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման բողոք ներկայացնելու ժամկետի հետ կապված հիմնախնդիրները՝ ատենախոսը հիմնավորում է, որ գործող կանոնակարգումը բավարար համարվել չի կարող, քանի որ այն չի արտացոլում նոր երևան եկած հանգամանքների առանձին խմբերին բնութագրական առանձնահատկությունները:

Որպես ուշադրության արժանի հիմնախնդիր՝ ցույց է տրվում նաև այն հանգամանքը, որ գործող դատավարական օրենսդրությունը չի պարունակում հատուկ կանոններ, որոնք կոչված են կարգավորելու գործին մասնակցող անձանց իրավահաջորդների կողմից բողոքարկման համար սահմանված ժամկետի հաշվարկման հետ կապված հարաբերությունները: Այս առումով հեղինակը, ելնելով իրավահավասարության սկզբունքի պահպանման նկատառումներից, առաջարկում է վերջիններիս կողմից բողոքարկման դեպքում օրենքով նախատեսված եռամսյա ժամկետում ներառել իրավանախորդի կողմից համապատասխան հանգամանքի մասին իրազեկվածության ժամանակահատվածը, ինչպես նաև բողոքարկման ժամկետի բացթողում չդիտարկել այն դեպքերը, երբ անձը մինչև նյութական իրավահարաբերության մեջ իրավահաջորդության պահը առնվազն երեք ամիս տեղյակ է եղել նոր երևան եկած հանգամանքների գոյության մասին:

Երկրորդ գլխի երրորդ պարագրաֆում՝ «Նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթի ձևական նախադրյալները» վերտառությամբ, հետազոտվում են նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման բողոքի ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջները:

Հեղինակը, վերլուծելով նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման բողոքի ձևի հետ կապված խնդիրը, արձանագրում է, որ, թեև դատավարական օրենքում ուղղակիորեն դրույթներ չկան բողոքի ձևի կապակցությամբ, սակայն, հետազոտվող վարույթը կարգավորող նորմերի ուսումնասիրությունը վկայում է, որ այն պետք է ներկայացվի գրավոր:

Այնուհետև ատենախոսը, անդրադառնալով նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման բողոքի բովանդակությանը ներկայացվող պայմաններին, հիմնավորում է, որ դատական ակտի վերանայման բողոքում, բացի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով ներկայումս նախատեսված պայմաններից, պետք է նշվեն բողոք բերող անձի և գործին մասնակցող այլ անձանց հասցեները, գործի համարը և դատական ակտը կայացրած դատարանի անվանումը:

Հետազոտելով խնդրո առարկա հարցին վերաբերող օրենսդրությունը և միջազգային փորձը՝ հեղինակը կարծիք է հայտնում այն մասին, որ իրավակիրառ պրակտիկայում խնդիրներից խուսափելու նպատակով անհրաժեշտ է հստակեցնել նաև դատական ակտերի վերանայման բողոքին կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը: Այս առումով ատենախոսը առաջարկում է դատավարական օրենքում կատարել համապատասխան փոփոխություններ՝ հաշվի առնելով հենց քննարկվող ինստիտուտի առանձնահատկությունները:

Երրորդ գլուխը` «Նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթի դատավարական առանձնահատ-կությունները» վերտառությամբ, բաղկացած է երեք պարագրաֆներից:

Երրորդ գլխի առաջին պարագրաֆում` «Նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթի հարուցումը» վերտառությամբ, պարզաբանվում են նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթի հարուցման հետ կապված հիմնախնդիրները:

Անդրադառնալով նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման իրավասություն ունեցող դատարանի որոշման հարցին` նշվում է, որ այն պետք է դիտարկել ոչ թե նպատակահարմարության, որի մասին խոսվում է որոշ դատավարագետների կողմից, այլ դատական համակարգի գործառնական աստիճանակարգման և արդարադատական գործառույթների ներհամակարգային տարանջատման սկզբունքների լույսի ներքո: Այս տեսանկյունից ատենախոսը ընդգծում է, որ ստորադասության վրա հիմնված ընդհանուր իրավասության դատարանների եռաստիճան համակարգի պայմաններում, երբ յուրաքանչյուր ատյանի իրավասությունը եզրափակվում է իր կողմից ընդունված դատական ակտով, օրենսդրի կողմից ներդրված «մեկ ատյան բարձր» սկզբունքը արդարացված է թվում:

Այնուհետև հեղինակը քննարկման առարկա է դարձնում նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման բողոքի վերադարձման հիմքերը և հիմնավորում, որ դրանցից յուրաքանչյուրի առկայությունը, բացառությամբ բողոքը վերադարձնելու մասին դիմում ներկայացնելու դեպքի, վկայում է բողոք բերած անձի կողմից բողոքարկման իրավունքի իրականացման որևէ պայմանի խախտման մասին: Ուստի եզրակացվում է, որ նոր երևան եկած հանգամանքներով վերանայման վարույթի հարուցման հնարավորությունը ուղղակի կախվածության մեջ է գտնվում նման հիմքերի բացակայությունից:

Միևնույն ժամանակ, խնդրահարույց է համարվում այն իրողությունը, որ, միայն նրանից ելնելով, թե որ դատական ատյանին է հասցեագրված դատական ակտի վերանայման բողոքը, բողոք բերած անձը կարող է հայտնվել տարբեր իրավիճակներում: Մասնավորապես, եթե վերաքննիչ դատարանի կողմից վերադարձվելու դեպքում բողոք բերած անձը ազատ է դատարանի մատնանշած թերությունները վերացնելուց հետո կրկին ներկայացնելու հարցում, ապա վճռաբեկ դատարանի կողմից բողոքի թերությունները շտկելու հնարավորության օգտագործումը կախվածության մեջ է դրված դատարանի հայեցողությունից: Ասվածը նկատի ունենալով` հիմնավորվում է, որ վճռաբեկ վարույթի վերաբերյալ կանոնների սուբսիդիար կի-

րառունը քննարկվող ինստիտուտի նկատմամբ այնքան էլ հաջողված չի թվում և առաջարկվում է գործող դատավարության օրենսգրքում կատարել համապատասխան լրացում:

Որպես նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթի արդյունավետությունը կանխորոշ հանգամանք՝ հետազոտվում է նաև դատական ակտի կասեցման հիմնախնդիրը: Հեղինակը Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համատեքստում հիմնավորում է, որ նման իրավունքի վերապահումը դատարանին նահանջ չէ դատական պաշտպանության իրավունքի տարր հանդիսացող վերջնական դատական ակտի կատարում պահանջելու իրավունքից:

Վերլուծելով վերանայվող դատական ակտի կասեցման հետ կապված հիմնահարցերը՝ ատենախոսը արձանագրում է, որ պետք է դատարանին հնարավորություն տալ նման որոշում կայացնել ոչ միայն վերանայման վարույթ հարուցելիս, այլև բողոքի քննության արդյունքում: Հիմնավորվում է նաև այն հանգամանքը, որ վերանայվող դատական ակտի կատարման կասեցման որոշումը չի կարող գործել անժամկետ և այն ենթակա է վերացման վերանայման բողոքի քննության արդյունքում կայացված դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու պահից, քանի որ բողոքը մերժվելու դեպքում այն դառնում է ինքնանպատակ, իսկ բողոքը բավարարվելու դեպքում վերանում է այդ դատական ակտի կատարման վտանգը, քանի որ դատական ակտի բեկանումը հիմք է հարուցված կատարողական վարույթը կարճելու համար:

Երրորդ գլխի երկրորդ պարագրաֆում՝ «Նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման բողոքի քննության դատավարական կարգը» վերտառությամբ, ներկայացվում է նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման բողոքի հիման վրա հարուցված գործի քննության կարգը:

Ուսումնասիրելով հետազոտվող վարույթում կատարվող դատավարական գործողությունները՝ ատենախոսը նշում է, որ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթի հարուցումից հետո դատարանը ձեռնամուխ է լինում բողոքը գործի քննությանը նախապատրաստելուն, որի նպատակը առաջին իսկ դատական նիստում գործի ճիշտ քննության ապահովումն է: Այս առումով կարևորվում է նաև բողոքի պատասխանի ուսումնասիրությունը, քանի որ այն իրենից ներկայացնում է բողոքի հիմքերի և հիմնավորումների վերաբերյալ գործին մասնակցող այլ անձանց դիրքորոշումը:

Դրա հետ մեկտեղ, հեղինակը արձանագրում է, որ, եթե բողոքը վերադարձնելու սպառնալիքով օրենսդիրը պարտավորեցնում է բողոքին կից ներկայացնել նոր երևան եկած հանգամանքների առկայությունը հիմնավորող ապացույցներ, ապա նույնը չի կարելի ասել բողոքի պատասխան ներկայացնող անձանց վերաբերյալ, քանի որ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների պատասխանների ներկայացման դատավարական կարգը սահմանող նորմերը, որոնք սուբսիդիար կարգով ներկայումս կիրառելի են հետազոտվող վարույթի նկատմամբ, բողոքի պատասխանին ապացույցներ կցելու իրավական հնարավորություն չեն նախատեսում: Իսկ այդ հանգամանքը, ըստ ատենախոսի, խախտում է կողմերի իրավահավասարության սկզբունքը, որը հիմնված է ինչպես նրանց՝ լսված լինելու իրավունքը («audiatur et altera pars» - «Թող լսված լինի մյուս կողմը») ապահովելու, այնպես էլ մրցակցող կողմերի դատավարական միջոցների հավասարության («non debet actori licere quod reo non permittitur» - «Չի կարելի հայցվորին թույլատրել այն, ինչն արգելված է պատասխանողին») երաշխավորման վրա: Հետևաբար, եզրակացվում է, որ անհրաժեշտ է դատավարական օրենքը լրացնել բողոքի պատասխան ներկայացնելու կարգ սահմանող առանձին դրույթով: Ընդ որում, նման եզրահանգման համար հիմք են ընդունվում վերաքննիչ և վճռաբեկ բողոքների պատասխաններ ներկայացնելու կանոններով նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտի վերանայման բողոքի պատասխան ներկայացնելու հետ կապված այլ խնդիրները:

Այնուհետև վեր է լուծվում գործի քննության ժամանակ կատարվող դատավարական գործողությունները և այդ համատեքստում քննարկման առարկա է դարձվում այն հարցը, թե արդյոք դատարանը պետք անմիջականորեն հետազոտի և գնահատի գործում առկա, այդ թվում՝ բողոքին կից ներկայացված ապացույցները: Ներկայացնելով դատական ապացուցման էությունը և դրա մասերը կազմող դատավարական գործողությունները՝ հեղինակը հանգում է այն եզրակացության, որ առանց ապացույցների հետազոտման և գնահատման դատարանի կողմից նոր երևան եկած հանգամանքների առկայության կամ բացակայության մասին ցանկացած հետևություն խաթարում է դատական ապացուցման հիմքում ընկած ողջ տրամաբանությունը, և, հետևաբար, անհրաժեշտ է այդ մասին դրույթ ամրագրել քաղաքացիական դատավարության օրենսդրությունում:

Երրորդ գլխի երրորդ պարագրաֆում՝ «Նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերը վերանայող դատարանի լիազորությունները» վերտառությամբ, քննարկվում են նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերը վերանայող դատարանի լիազորությունները:

Անդրադառնալով նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերը վերանայող դատարանի լիազորությունների էության բացահայտմանը՝ նշվում է, որ դրանք դատարանին տրված իրավունքներն ու պարտականություններն են՝ գործի քննության արդյունքում օրենսդրությամբ նախատեսված իրավաչափ գործողություններ կատարելու համար: Ընդ որում, հեղինակը ընդգծում է, որ ներկայումս դրանք ստացել են որոշակի զարգացում, քանի որ, ելնելով վերանայման օբյեկտից, դատարանը օժտվել է և տարաբնույթ լիազորություններով: Բացի այդ, ընդլայնվել է գործն ըստ էության լուծող դատական ակտի բեկանման լիազորությունը, որը ներառում է նաև այնպիսի դատավարական հետևանքներ, ինչպիսիք են գործը նոր քննության ուղարկելը, դատական ակտը փոփոխելը, գործի վարույթը կարճելը և այլն:

Հեղինակը, վերլուծելով դատական ակտի բեկանման հիմք հանդիսացող հանգամանքների շրջանակը, հետևություն է արել այն մասին, որ քննարկվող ինստիտուտի դեպքում դատական ակտի բեկանման համար անհրաժեշտ պայման է հանդիսանում նոր երևան եկած հանգամանքի առկայությունը՝ անկախ դատական ակտի վրա դրա ունեցած ազդեցությունից: Միևնույն ժամանակ, ատենախոսի կարծիքով, նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերը վերանայող դատարանները պետք է օժտված լինեն այնպիսի հատուկ լիազորությամբ, որ կարողանան կայացնել նոր դատական ակտ նույնիսկ այն դեպքում, երբ համապատասխան փաստական հանգամանքները հաստատվել են ոչ թե կամ ոչ միայն ստորադաս դատական ատյանում, այլև վերանայման վարույթում:

Եզրակացության մեջ ընդգրկված են հետազոտության հիմնական արդյունքները և հեղինակի եզրահանգումները, ինչպես նաև օրենսդրության կատարելագործման առնչությամբ ներկայացված առաջարկությունները, որոնք ամփոփ հանգում են հետևյալին.

1. Նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթը քաղաքացիական դատավարության ինքնուրույն և բացառիկ փուլ է, որի ընթացքում արդարադատության իրականացման արդյունքում տեղ գտած թերությունները շտկելու նպատակով նոր երևան եկած հանգամանքների համատեքստում ստուգվում են օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի օրինականությունը և հիմնավորվածությունը:

2. Նոր երևան եկած հանգամանքների առանձին խմբերը սահմանող նորմերը ենթակա են վերանայման, քանի որ դրանց մի մասի ձևակերպումները այնքան էլ հաջողված չեն կարող համարվել, իսկ մյուս կողմից դրանց շարքում օրենսդիրը նախատեսել է այնպիսիները, որոնք ոչ թե նոր երևան եկած, այլ, ըստ էության, նոր հանգամանքներ են:

3. ՀՀ քաղաքացիական և քրեական դատավարության օրենսդրությունների միջև առկա է աններդաշնակություն այն առումով, որ, եթե ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը բոլոր դեպքերում արդարացիորեն հանցավոր արարքի հիմքով դատական ակտի վերանայման ժամանակ միակ թույլատրելի ապացույց է դիտարկում օրինական ուժի մեջ մտած դատավճիռը, ապա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի գործող կանոնակարգումները որոշ դեպքերում բացառում են նման դատավճռի կայացման հնարավորությունը: Հետևաբար, անհրաժեշտ է քրեական դատավարության օրենսգրքում ամրագրել քրեական գործի հարուցումը մերժելու կամ գործի վարույթը կարճելու արգելք այն իրավիճակներում, երբ համապատասխան հանցավոր արարքների հաստատումը դատավճռով կարող է անհրաժեշտ լինել դատական գործի վարույթը նոր երևան եկած հանգամանքներով նորոգելու համար:

4. Ի տարբերություն վերաքննիչ և վճռաբեկ վարույթների՝ տվյալ դեպքում օրինական ուժի մեջ մտած դատական ակտի նոր երևան եկած հանգամանքներով վերանայում պահանջելու իրավունք չունեն գործին մասնակից չդարձված անձինք, քանի որ նրանց գործի քննությանը չներգրավվելը և նրանց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ դատական ակտ կայացնելը առաջին հերթին վկայում է դատարանի կողմից թույլ տրված դատական սխալի մասին:

5. Նոր երևան եկած հանգամանքներով վերանայման օբյեկտներ են հանդիսանում ոչ միայն առաջին ատյանի և վերաքննիչ դատարանի գործն ըստ էության լուծող և բողոքարկելի միջանկյալ դատական ակտերը, այլև օրինական ուժի մեջ մտած վճռի ուժ ստացած վճարման կարգադրությունները և վճռաբեկ դատարանի՝ վճռաբեկ բողոքը վերադարձնելու և բողոքի քննության արդյունքում կայացված դատական ակտերը:

6. Որոշակի ճշգրտման կարիք ունի նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման բողոք ներկայացնելու համար սահմանված ժամկետի հաշվարկման կանոնը, քանի որ այն լիարժեք չի արտացոլում նոր երևան եկած հանգամանքների առանձին խմբերին բնորոշ առանձնահատկությունները, իսկ իրավահաջորդի կողմից բողոք բերելիս դրանով առաջնորդվելը բավականին խնդրահարույց է թվում:

7. Պետք է հստակեցնել նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման բողոքի բովանդակությունը և բողոքին կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը սահմանող դրույթները:

8. Նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթի հարուցման հարցը քննարկելիս հատկապես կարևոր նշանակություն ունի բողոքի վերադարձման հիմքերի առկայության պարզումը, քա-

նի որ դրանցից յուրաքանչյուրն էլ, բացառությամբ բողոքը վերադարձնելու մասին դիմում ներկայացնելու դեպքի, վկայում է բողոք բերած անձի կողմից բողոքարկման իրավունքի իրականացման որևէ պայմանի խախտման և, հետևաբար, վարույթի հարուցման անթույլատրելիության մասին: Ընդ որում, գործող դատավարական օրենսդրությունը ոչ լիարժեք կերպով է ամրագրում դատական ակտի վերանայման բողոքի վերադարձման հիմքերի շրջանակը: Դրա հետ մեկտեղ, ուշագրավ է այն, որ օրենսդիրը, նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթի արդյունավետությունը երաշխավորելու նպատակով նախատեսելով վերանայվող դատական ակտի կատարման կասեցման հնարավորություն, չի սահմանում դրա գործողության տևողությունը, ինչը, բնականաբար, ենթակա է շտկման:

9. Անհրաժեշտ է առանձին դրույթով ամրագրել դատական ակտերի վերանայման բողոքի պատասխան ներկայացնելու դատավարական հատուկ կարգ, քանի որ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների պատասխանի ներկայացման դատավարական կարգի սուբսիդիար կիրառումը չի համապատասխանում քննարկվող վարույթի առանձնահատկություններին:

10. Նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման բողոքի քննության դատավարական կարգը, որոշակի ընդհանրություններով հանդերձ, առանձնանում է ինչպես առաջին ատյանում գործի ըստ էության քննությունից, այնպես էլ վերաքննիչ և վճռաբեկ դատարաններում գործող ընթացակարգերից:

11. Նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթի ինքնատիպության մասին վկայող հատկանիշներից է հանդիսանում այն, որ այստեղ նոր երևան եկած հանգամանքի առկայության հաստատումը ինքնին բավարար պետք է դիտարկել օրինական ուժի մեջ մտած դատական ակտի բեկանման համար:

12. Նոր երևան եկած հանգամանքներով վերանայման վարույթի արդյունքում հաստատված փաստական հանգամանքները գործով նոր դատական ակտ կայացնելու համար բավարար լինելու դեպքում դատարանը պետք է կայացնի նման ակտ, քանի որ գործը նոր քննության ուղարկելը, մի կողմից, հակասում է դատավարական խնայողության սկզբունքին, իսկ, մյուս կողմից, կարող է հանգեցնել ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի խախտմանը:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Քրեական գործի հարուցումը մերժելու, քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումներով հաստատված հանգամանքները նոր երևան եկած հանգամանքներ դիտարկելու հիմնախնդիրը քաղաքացիական դատավարությունում // Պետություն և իրավունք, թիվ 1 (51), Երևան, 2011, էջեր 88-94,

2. Նոր երևան եկած հանգամանքներով վերանայման օբյեկտները քաղաքացիական դատավարությունում // ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, 2012, էջեր 506-518,

3. Նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթի էությունը և նշանակությունը // Պետություն և իրավունք, թիվ 3 (57), Երևան, 2012, էջեր 42-59,

4. Նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերը վերանայող դատարանի լիազորությունները // Դատական իշխանություն, թիվ 4 (165), Երևան, 2013, էջեր 72-76,

5. Օրինական ուժի մեջ մտած դատավճիռը՝ որպես նոր երևան եկած հանգամանք հանդիսացող հանցավոր արարքների հիմքով դատական ակտերի վերանայման միակ թույլատրելի ապացույց // Հայ գրատպության 500-ամյակին և ԵՊՀ ՈԻԳԸ հիմնադրման 65-ամյակին նվիրված գիտաժողովի հոդվածների ժողովածուի №3 հատոր, Երևան, էջեր 225-230:

МАРКОСЯН ТИГРАН АРТУРОВИЧ

ПРОИЗВОДСТВО ПО ПЕРЕСМОТРУ СУДЕБНЫХ АКТОВ ПО ВНОВЬ ОТКРЫВШИМСЯ ОБСТОЯТЕЛЬСТВАМ В ГРАЖДАНСКОМ ПРОЦЕССЕ

РЕЗЮМЕ

Диссертационная работа на соискание ученой степени кандидата юридических наук посвящена всестороннему изучению и анализу проблем пересмотра судебных актов по вновь открывшимся обстоятельствам, одного из важнейших институтов права гражданского процесса.

Основные вопросы, связанные с институтом пересмотра судебных актов по вновь открывшимся обстоятельствам, постоянно находились в центре внимания процессуалистов. Они становились предметом исследования как в научных работах авторов времён дореволюционной царской России, так и в работах процессуалистов советского периода и современности. Более того, тема настоящей работы или ее отдельные вопросы обсуждались также на уровне кандидатских и докторских диссертационных работ.

Тем не менее, необходимо отметить, что исследуемый институт пока ещё изучен недостаточно, и всеобъемлющие научные работы по данной тематике отсутствуют. Сказанное обусловлено также той действительностью, что механизм пересмотра судебных актов по вновь открывшимся обстоятельствам, внедрённый в гражданский процесс Республики Армения с 2010 года, проявляется в достаточно своеобразной форме и отличается как от ранее существовавших идентичных институтов процессуального законодательства, так и от современных.

Об актуальности темы свидетельствует также тот факт, что Европейский суд по правам человека и Конституционный суд РА рядом принятых судебных актов выразили принципиальные позиции относительно сущности и применения отдельных вопросов производства по пересмотру судебных актов по вновь открывшимся обстоятельствам, которые, однако, не отражены полностью в действующем законодательстве.

Исходя из актуальности темы, целью настоящего исследования явилось комплексное изучение теоретических и практических задач производства по пересмотру судебных актов по вновь открывшимся обстоятельствам и разработка на его основе рекомендаций по совершенствованию законодательства и правоприменительной практики.

Автор диссертационной работы подверг анализу сущность производства по пересмотру судебных актов по вновь открывшимся обстоятельствам и попытался определить его место в ряду других производств по пересмотру.

Далее, на основании встречающихся в науке гражданского процесса точек зрения и сформировавшейся правоприменительной практики, автор выразил мнение о том, что изучаемое производство является не только самостоятельной, но и исключительной стадией гражданского процесса, в течение которой для устранения недостатков, нашедших место в процессе осуществления правосудия, в контексте вновь открывшихся обстоятельств проверяются законность и обоснованность судебного акта, вступившего в законную силу.

В условиях выявления гражданско-процессуального содержания понятия “судебная ошибка” автор изучил основания пересмотра судебных актов по вновь открывшимся обстоятельствам, в результате чего они были определены как юридические факты, влияющие на обжалование судебных актов и их законность и обоснованность.

Диссертантом детально изучены также предпосылки реализации права на обжалование судебных актов по вновь открывшимся обстоятельствам и обоснована их самостоятельность.

В настоящей работе автор обратил особое внимание и обсудил действия, совершаемые в производстве по пересмотру судебных актов по вновь открывшимся обстоятельствам. Учитывая однородный характер, цели и задачи этих действий, диссертант обосновал и выделил некоторые части обсуждаемого производства.

На основании проведённых исследований автор пришёл не только к определённым теоретическим выводам, но и по поводу многочисленных обсуждённых вопросов представил рекомендации по совершенствованию действующего гражданского законодательства и судебной практики.

TIGRAN ARTHUR MARKOSYAN

PROCEEDING OF REVIEW OF THE JUDICIAL ACTS UNDER THE NEWLY DISCOVERED CIRCUMSTANCES IN CIVIL PROCEDURE

SUMMARY

The dissertation is devoted to comprehensive study and analysis of the problems of one of the most important institutions of the Civil Procedure Law - review of judicial acts under the newly discovered circumstances.

The problems regarding the institution of review of judicial acts under the newly discovered circumstances have always been in the center of the scientists' attention. These problems were analyzed in Imperial Russia, as well as in Soviet and modern authors' scientific works. Moreover, this issue and its specific parts have been discussed in the master and doctoral theses.

However, it should be noted that the abovementioned institution has not been fully explored yet and there are no comprehensive scientific papers concerning the subject. It is due to the fact that the mechanism of review of judicial acts under the newly discovered circumstances which was implemented in the Republic of Armenia in 2010 is quite different from the mechanisms which existed before, as well as the mechanisms which exist in the appropriate legislation of other countries nowadays.

The relevance of the chosen subject is also evidenced by the fact that the Constitutional Court of the RA and the European Court of Human Rights expressed principal viewpoints over the institution of review of judicial acts under the newly discovered circumstances, its specific issues and the application of that institution through a number of judicial acts, which, however, are not fully reflected in current legislation.

Based on the relevance of the subject, the aim of this dissertation is the complex study of theoretical and practical issues of the institution of review of judicial acts under the newly discovered circumstances and the development of proposals concerning the improvement of legislation and law enforcement practice.

The nature and the place of the institution of review of judicial acts under newly discovered circumstances among other revisal proceedings are analyzed in the author's dissertation. Then, based on the opinions encountered in the science of procedural law and on the law enforcement practice, the author brings the opinion that this legal proceeding is an independent and exclusive phase of civil procedure, during which the legality and validity of judicial acts are checked in the light of newly discovered circumstances in order to correct the shortcomings of justice.

Under disclosure of the civil procedural concept of "judicial error" the author has studied the grounds of review of judicial acts under the newly discovered circumstances in his dissertation, which have been formulated as legal facts affecting the validity and legality of judicial acts as well as their appeal.

The author has studied in detail the premises of the right to appeal the judicial acts under the newly discovered circumstances and has justified their self-sufficiency.

In his work the author has discussed and analyzed all the actions which are made during the proceeding of review of judicial acts under newly discovered circumstances. Considering the homogeneous nature of these actions, their goals and objectives, the author has separated certain parts of the proceeding.

Based on the analysis, the author came to a number of theoretical conclusions as well as made a range of recommendations concerning the improvement of current civil procedure legislation and judicial practice.